

զածութեամբ մը կը լմնցրնէ նաեւ Պինթերիմ՝ զերմանացի հեղե-
նակը¹: Աբրէհէմ² սոյն հանդանակը համարի «Նիկիական» որուն
մէջ Ա. Պոլսինը խոթուած է, : Թող տարով ուրիշ շատ հիները՝
նոր ատեններս Ազուարդ Տիւրքիէ իրեն մէկ զրուածքին մէջ³
ճիշդ նոյնը կը կրկնէ՝ ինչ որ Հայք սովորաբար կը զրուցեն: Փերէքս
Նէվ⁴ Ղովանեան համալսարանին մէջ սրբազան Աստուածաբանու-
թեան վարպետ եւ, ինչպէս կ'երեւայ, հայերէն լեզուի ալ տե-
ղեակ, «Ղան հոշման Հոգւոյն սրբոյ առ Հայս»,⁴ գրոյն հեղինակը
չի տարակուսիր սոյն հանդանակն ամբողջապէս Հայոց սեպհական
համարելու. սակայն կրնար անտարակոյս ճշուութեան ճամբան
զանեւ, եթէ այնչափ իրեն վերաբերէր աս խնդիրը որչափ, օրինակի
աղագու, վերոյիշեալ Մսերի կը վերաբերի:

Մսեր Մագիստրոս, Փեթերսպուրկ Հայոց Ակադեմիային
մէջ կրօնի ուսուցիչ եւ բովանդակ՝ Աջմիածնի կաթողիկոսին ան-
միջական իշխանութեան տակ եղած Հայաստանի մէջ իրրեւ զե-
րազանց հեղինակութիւն մը՝ աստուածաբանական իրաց համար
ճանչցուած, 1850էն սկսեալ այլեւայլ դասակարգի աշակերտաց
համար Վրիստոնէական վարդապետութեան Հրահանգներ ի յոյս
ընծայած է՝ որոնք վերջին երկու կաթողիկոսներէն եւ Աջմիածնի
մնայուն սինհոդոսներէն հաստատուած են: Բնդարձակազոյն
Հրահանգին զուէր յարմար համարած է՝ մեր առաջնկայ հան-
դանակին վրայ քննութիւն մ'ընել անանկ հմտութեամբ մը՝ որն
որ հայերէն հրատարակութեանց ասհմանէն անդին չ'անցնիր: Մենք
իրեն հետ, ասկէ հինգ տարի առաջ (1865ին), գործք ունեցանք՝
երբ որ կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութեան եւ Աջմիած-
նական Հայոց վարդապետութեան տարբերութեանց վրայ՝ զլիսաւո-
րաբար իրենց Վրիստոնէականներուն վրայ հիմնելով, խօսեցանք.
բայց դեռ իրեն պարտական մնացած ենք ան յառաջաբանական
քննութեան մասին՝ զորն որ հանդանակին վրայօք բրած է:

Պարապ անդ չէ որ Մսեր այսչափ հոգացողութեամբ ձեռ-
նամուխ կ'ըլլայ աս հանդանակը պաշտպանելու: Բաւական ծանր,
պատճառ ունի: Հայոց չկաթողիկէացց մէկ մասը, ան ալ կենդրո-
նական մասը, ստիպուած է շատ մը ակնածութիւններ ընելու
Ազգաբաժնի եկեղեցւոյ առջեւ՝ որն որ 9 դարէ հետէ ամբաս-
տանութեան զուէր մ'ըրած է Հռոմէական եկեղեցւոյ՝ ամէն
եկեղեցեաց մօր եւ ուսուցչին, դէմ թէ ինչու մի միայն ճաննիկ
մը հանդանակին մէջ աւելցուցեր է, զորն որ ապօրինաւոր կը հա-

¹ Anton Jos. Binterim: Die vor-
züglichsten Denkwürdigkeiten der christ-
katholischen Kirche. Mainz, 1825. Հատ.
Դ. Մասն 2. էջ 235:

² Joh. J. Schroeder: Thesaurus lin-
guae armenicae. տպ. Ամսկերտամ 1711:

³ Histoire des dogmes . . . de l'église
Arménienne. Բ. տպ. 1857. էջ 132—134.
Եւ 175:

⁴ Felix Nève: de l'invocation du
S. Esprit dans la liturgie arménienne.
Louvain, 1862